

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՆՇԽԱՐՔ ՏԱՐՕՆՈՅ

«Սիոն» 1968 Յուլիս-Օգոստոս թիւով (էջ 355), հրատարակած է Նազարէթ Պ. Մարտիրոսեանի «Նշխարք Տարօնոյ» ձեռագիր աշխատութեան մէջ գտնուող վեց ժողովրդական հէքիաթներ, ընհանրապէս Մշոյ բարբառով: Անոնք են. ձեռագրին մէջ եղած շարքով.

1. Թուր ի Թամ Թագաւորի հէքիաթ
2. Պիլպուլ Հագարու հէքիաթ
3. Քաջանց Թագաւորի տղու՝ Ուսուփ Զէլէպու հէքիաթ
4. Հասօյէ-Տուտեն
5. (Անվերնագիր)
6. (Անվերնագիր)

Վերոյիշեալ հէքիաթներէն ոմանք կամ անոնց տարբերակները կրնան նախապէս հրատարակուած ըլլալ զանազան հանդէսներու կամ ժողովրդական գրոյցներու հաւաքածոներու մէջ: Երուսաղէմի Կիւլպէնկեան Մատենադարանը «Հայ ժողովրդական Հէքիաթներ» ժողովածուի (Հայկական Գիտութիւններու Ակադեմիայի Հրատարակութիւն, Երեւան) միայն առաջին հինգ հատորները կը գտնուին: Մինչ, նոյն ժողովածուի առաջին հատորի յառաջաբանին մէջ կը շեշտուի որ 7-րդ, 8-րդ և 9-րդ հատորները պիտի պարունակեն Տարօնի, Սասունի և Պուլանդի հէքիաթները:

Նազարէթ Պ. Մարտիրոսեան իր ձեռագիր աշխատութեան մէջ ակնարկութիւն չ'ըներ այս վեց հէքիաթներու ընդօրինակման պարագաներուն. այսպէս, յայտնի չէ թէ ինք անձամբ լսած է հէքիաթներու պատմումը գիւղերու մէջ, թէ զանոնք ընդօրինակած է ուրիշներու գրառումներուն վրայ հիմնուելով: Ինչ ալ ըլլայ պարագան, այս հէքիաթները վստահ ենք որ կը ներկայացնեն բանասիրական որոշ արժէք մը, այդ պատճառով ալ «Սիոն» յարմար նկատած է հրատարակութեան տալ զանոնք՝ մոռացումէ փրկելու համար:

Խմբագիր Ա. Գ. պահած է հեղինակին ուղղագրութիւնը և, որոշ չափով, կէտադրութիւնը: Մարտիրոսեան, թերեւս աճապարանքի իբր արդիւնք, զանց ըրած է պարբերութիւններու դրութիւնը պահել, այնպէս որ տուեալ հէքիաթի մը մէջ տարբեր վիճակներ, պահեր, խօսակցութիւններ կամ անձնաւորութիւններ մէկ ու միակ պարբերութեան մը տակ մտած են: Ան, իմաստին և դէպքերուն զարգացման հետեւելով, կատարած է որոշ փոփոխութիւններ՝ ընթերցումը աւելի դիւրամատչելի դարձնելու և բովանդակութեան մէջ աւելի տրամաբանուած կարգ մը պահելու մտահոգութեամբ:

Հէքիաթներու այս շարքին կը հետեւին ժողովրդական բանահիւսական արուեստի զանազան նմուշներ, որոնցմէ շատեր տարբեր ժամանակներու հրատարակուած են. սակայն Մարտիրոսեանի հաւաքածոները, խմբագրին կարծիքով, ունին փոքրիկ տարբերութիւններ, հետեւաբար կրնան տարբերակներ նկատուիլ և ատով իսկ՝ արժանի հրապարակուելու:

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Յուլիս-Օգոստոս, Թիւ 7-8, Էջ 354):

ՓԱՌԱՀԵՂ ՕԾՈՒՄ

ԱՄՄԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ Ս. ԹԱԳԷՈՍ ԵԿԵՂԵՑԻՒՆ

Մօտ երեք տարիներ առաջ, 1965-ի Հոկտեմբերի 10-ին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր (Եղիշէ Արք. Տէրտէրեան), Բարերար Տիար Յարութիւն Թաղոսեանի և Միաբանութեան անդամներու և հաւատացեալ ժողովուրդի խուռն բազմութեան մը ներկայութեան՝ կատարուած էր հիմնարկէքի հանդիսաւոր արարողութիւնը Ամմանի Ս. Թաղէոս եկեղեցիին: Նիւեորքաբնակ Բարերարը յատկապէս ժամանած էր Երուսաղէմ, ներկայ ըլլալու համար իր նուիրատուութեամբ կատարուելիք Ամմանի տաճարին հիմնարկէքին:

Հակառակ քաղաքական տագնապներուն, եկեղեցիի շինութիւնը անխափան շարունակուեցաւ և ներկայ տարույ Հոկտեմբերին արդէն իր աւարտին հասած էր: Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հօր հրաւերին ընդառաջելով, Բարերար Տիար Յարութիւն Թաղոսեան և իր Ազնուափայլ Տիկինը ընդունեցին ներկայ գտնուիլ Ս. Թաղէոս եկեղեցիի օծման արարողութեան, որ տեղի ունեցաւ Կիրակի, 27 Հոկտեմբեր 1968-ին:

Մասնաւոր կարգադրութեամբ մը, Երուսաղէմէն Պատրիարք Ս. Հօր և Բարերար ամուլին կ'ընկերանային Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ասլանեան, Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեան, Միաբան Հայրեր, սարկաւազներ և ժառանգաւորներ՝ կարելի հանդիսաւորութեամբ կատարելու համար օծման փառահեղ խորհուրդը:

Անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեան և ներշնչուած ու գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Հայրը: Պատարագին և օծման արարողութեան ներկայ գտնուեցան Ամմանի քրիստոնեայ յարանուանութիւններու պետերը և ներկայացուցիչները:

Նոյն օրը երեկոյեան, Պատրիարք Ս. Հայրը Ամմանի «Էլ Օրտոն» պանդոկին մէջ տրուած շքեղ ճաշկերոյթով մը պատուեց Բարերար ամուլը, իսկ Յորդանանի Վարչապետ Ն. Վ. Պահաճ իշխանի Տիար Թաղոսեանի կուրծքը զարդարեց «Քառաբապ»-ի Առաջին Կարգի շքանշանով:

Ամմանի Հայ գաղութին կողմէ իբրեւ յարգանքի արտայայտութիւն՝ Շաբաթ, 26 Հոկտեմբերի երեկոյեան Ամմանի Մարգական Միութիւնը ճոխ ընթրիք մը սարքեց «Ֆիլատելֆիա» պանդոկին մէջ, իսկ Կիրակի երեկոյեան՝ Հ. Մ. Ը. Միութիւնը թէյսսեղան մը տուաւ իր Ակումբին մէջ:

Տաղանդաւոր և հաւատացեալ հայ, Տիար Յարութիւն Թաղոսեան ծնած է 1892-ին խարբերդի Բշաղաք գիւղը: Երեք տարի տեղուոյն նախակրթարանը յաճախելէ ետք 1909-ին գաղթած է Ամերիկա և տարի մը վերջ սկսած է իր անձնական գործին: Մեծ Եղեռնին զոհ տուած է իր ընտանիքի անդամներուն մեծ մասը: Ամուսնացած է Օրդ. Աղանի Կօշկարեանի հետ և ունեցած են երկու դուստրեր՝ Եղիսաբէթ և Ալիս-Արփինէ, այս վերջինը կորսնցուցած են շատ կանուխ:

Տիար Յ. Թաղոսեան, որ բազմազբաղ անձնաւորութիւն մըն է և հնարիչը զանազան մեքենաներու, 1925-ական թուականներէն սկսեալ ծառայած է Ամերիկահայ համայնքին և եկեղեցիին: Իբրեւ վարձատրութիւն իր բազմամեայ գործունէութեան, որուն ընթացքին միշտ ալ իրեն օժանդակ եղած է Ազն. Տիկ. Թաղոսեան, 1956-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Վեհափառ Հայրապետին կողմէ պարգեւատրուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ա. Կարգի ականակուռ շքանշանով: Իսկ 1964-ին ստացած է Ն. Ամենապատուութիւն Պատրիարք Ս. Հօր կողմէ նուիրուած Ս. Յարութեան Տաճարի ադամանդակուռ շքանշանը:

(«Սիոն», 1968, ԽԲ. Տարի, Սեպտեմբեր-Նոյեմբեր, Թիւ 9-12, Էջ 405-407):